ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան 28 օգոստոսի 2019թ.
ժամը. 16:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Գ. Մկրտչյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ) **Ա. Գևորգյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ) **Բ. Եդիգարյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

(Գ. Մկրտչյան)

«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/23» գնանշման հարցման ընթացակարգով ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2019 թվականի օգոստոսի 28-ին, ժամը 16:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց ջրային հոսքերի կարգավորման փականների և պտտվող սկավառակով փականների գնման նախահաշվային գները մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Ջրային հոսքերի կարգավորման փականներ	12000000 (տասներկու միլիոն)
2	Պտտվող սկավառակով փականներ	36000000 (երեսունվեց միլիոն)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ
2	«ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ
3	«Էյչ Գրուպ» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցները www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել էին հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«Ինվեստ Բիզնես» և «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
Չափաբաժին N1 Ջրային հոսքերի կարգավորման փականներ			
1	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ	5379166.67 ՌԴ ռուբլի 38353458.36 ՀՀ դրամ	6455000.00 ՌԴ ռուբլի 46024150.00 ՀՀ դրամ
2	«ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ	17010000.00	17010000.00
3	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	15000000.00	18000000.00
Չափաբաժին N2 Պտտվող սկավառակով փականներ			
1	«ԱԼԻՈՆ» ՍՊԸ	6937500.00 ՌԴ ռուբլի 49464375.00 ՀՀ դրամ	8325000.00 ՌԴ ռուբլի 59357250.00 ՀՀ դրամ
2	«ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ	29985000.00	29985000.00
3	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	45000000.00	54000000.00

«ԱԼԻՈՆ» ՍՊԸ հանդիսանում է ՌԴ ռեզիդենտ և գնային առաջարկը ներկայացրել է ՌԴ ռուբլով: Մյուս մասնակիցների գների հետ համեմատության համար նրա առաջարկված գները փոխարկվել են ՀՀ դրամի, 28.08.2019 թ. դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով՝ 7.13 դրամ 1 ՌԴ ռուբլու համար:

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակիցների փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «ԱԼԻՈՆ», «ՏՈՒՐԲԵԿՍ» և «Էյչ Գրուպ» ՍՊ Ընկերությունների կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «ԱԼԻՈՆ», «ՏՈՒՐԲԵԿՍ» և «Էյչ Գրուպ» ՍՊ Ընկերությունների հայտերը գնահատել բավարար:
2. 2-րդ չափաբաժնի մասով՝
   ա/ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊ Ընկերությանը:
   բ/ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Էյչ Գրուպ» ՍՊ Ընկերությանը:
   գ/ երրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «ԱԼԻՈՆ» ՍՊ Ընկերությանը:
3. Հրավերով սահմանված կարգով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից պահանջել հայտով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը, հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:
4. Հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ 1-ին չափաբաժնի մասով «ԱԼԻՈՆ», «ՏՈՒՐԲԵԿՍ» և «Էյչ Գրուպ» ՍՊ Ընկերությունների առաջարկած գները գերազանցում են գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակիցներին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-19/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ 2019 թ. օգոստոսի 21-ին և օգոստոսի 23-ին ստացվել են հարցադրումներ, որոնց վերաբերյալ պարզաբանումներ են տրամադրվել համապատասխանաբար օգոստոսի 22-ին և օգոստոսի 26-ին, դրանք նաև հրապարակելով Տեղեկագրում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Գ. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել «ԱԼԻՈՆ», «ՏՈՒՐԲԵԿՍ» և «Էյչ Գրուպ» ՍՊ Ընկերությունների հետ բանակցությունների վարման մասին ծանուցումներն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Մկրտչյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Ա. Գևորգյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան